Արձանագրություն N 2

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/10» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան

05.06.2019թ.
Ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Խաչիկյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Առուշանյանը, Գ. Մեհրաբյանը, Հ. Ռամազյանը, Ա. Գևորգյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյանը

1. **«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/10» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 03.06.2019 թվականին ներկայացված պարզաբանումներին պատասխանելու վերաբերյալ**

(Ա. Խաչիկյան)

Պարզաբանման պահանջի տեքստ հ 1.

2019 թվականի մայիսի «27»-ի որոշմամբ Ձեր կողմից հայտարարված թիվ ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/10 ծածկագրով մրցույթի շրջանակներում 1-ին մասի 2-րդ կետի 2.5 ենթակետի համաձայն. «Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում թափոնների տեղափոխման համար նախատեսված ցանկացած տիպի արկղերի, կոնտեյներների և նմանատիպ այլ տարաների՝ ապրանքների մատակարարված լինելը»:
Համաձայն 2017-ի մայիսի 4-ի կառավարության թիվ 526-Ն որոշման 65-րդ կետի. «Գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի»:
Հարց 1. Արդյոք կհամարվե՞ն նմանատիպ տարաների մատակարարման պայմանագրով (պատշաճ ձևով) մատակարարված լինելն անկախ տարայի օգտագործման նշանակությունից, եթե դրանք դասվում են տնտեսական նույն խմբում:
Հարց 2. Կդիտվե՞ն արդյոք տվյալ մրցույթի շրջանակներում գլանատակառներ, ռեզերվուարներ և կոնտեյներները նմանատիպ տնտեսական խումբ:
Խնդրում եմ պատասխանը տալ հստակ և սեղմ ժամկետում:

Պարզաբանում տրամադրելու տեքստ.

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ կարող են համարվել այն ապրանքների մատակարարված լինելը, որոնք չեն հակասի կառավարության թիվ 526-Ն որոշման 65-րդ կետով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Ա. Խաչիկյան
Անդամներ՝		Վ. Առուշանյան
		Գ. Մեհրաբյան
		Հ. Ռամազյան
		Ա. Գևորգյան
Քարտուղար՝		Գ. Մուրադյան